

ԻՐԱՆԱԿԱՆ ՎԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԿԻՍԱԶԱՅՆԱՅԻՆ
ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ (=W)
ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ՝ ՓՈԽԱՌՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

ՍԱՐԳԻՍ ԱՎԵՏՅԱՆ

Տարբեր լեզուների տարածամանակյա տվյալները վկայում են, որ $y(w) > (gw) > g$ հնչյունական զարգացումը սովորաբար ենթադրում է երկշրթնային $y(w)$ կիսաձայնի առկայություն: Ընդ որում, $w > gw > g$ անցումը լեզուներում հանդիպում է հատկապես բառասկզբի դիրքում, իսկ բառամիջում՝ ձայնավորների միջև, և բառավերջում այն ավելի հազվադեպ է տեղի ունենում, որտեղ w -ն սովորաբար կա՛մ պահպանվում է անփոփոխ, կա՛մ վերածվում է շրթնատամնային կամ երկշրթնային v/b շփականի, կա՛մ էլ դառնում է երկբարբառի ոչ վանկարար տարր(u): Անշուշտ, w -ի տարածամանակյա փոփոխության նշված դիրքային առանձնահատկությունները պայմանավորված են հնչյունական այն ընդհանուր միտումով, որի համաձայն՝ լեզուներում սովորաբար բառասկզբային դիրքում հնչյունների արտասանական ուժգնացում է նկատվում, մինչդեռ ձայնավորների միջև և բառավերջում, ընդհակառակը, արտասանական թուլացման միտումն է գործում¹:

Այսպես, կելտական լեզվաճյուղում հ.-ե. $*y(w)$ կիսաձայնը գալերենում տվել է w , իռլանդերենում՝ f (բառասկզբում) և v (բառամիջում, ընդ որում՝ վերջինս արդեն VII դ. անհետացել է միջձայնավորական դիրքում), իսկ վալիսերենում (կիմերեն), կոռներենում և բրետոներենում՝ gw (բառասկզբում), $-gw-$ $> w$ (բառամիջում) և w (բառավերջում): Ի դեպ, վալիսերեն w -ն երկշրթնային կիսաձայն է (= անգլ. w), իսկ բրետոներենում w -ն արտասանվում է որպես v (նախնական կիսաձայնային արտասանությունը պահպանվել է տրեգերական բարբառում)². հմմտ. հ.-ե. $*uēnto-s$ «քամի» $>$ (հմմտ. լատ. *ventus*, գոթ. *winds*, ժ. անգլ. *wind*) $>$ վալիս. *gwynt*, կոռն. *gwyns*, բրետ. *gwent* «քամի»³, հ.-ե. $*uēro-s$ «իրական, ստույգ» $>$ (հմմտ. լատ. *vērū*, հ. վ. q. *wār*, ժ. գեր. *wahr*) $>$ իռլ. *fir*, վալիս. *gwir*, կոռն. *guir*, բրետ. *gwir* «ստույգ, իրական»⁴, հ.-ե. $*g^{u}yo-s$ «կենդանի, ողջ, աշխույժ» $>$ (հմմտ. լատ. *vīvus*, ռուս. *живой*, հ. հնդ. *jīva-*) $>$ վալիս. *byw*,

¹ Տե՛ս Ս. Ավետյան, *ՎԻ/ՈՒ* -ի հնչյունական արժեքը և հնչյունային կարգավիճակը դասական հայերենում, Եր., 2012, էջ 33-39:

² Տե՛ս Լьюис Г., Педерсен Х. Краткая сравнительная грамматика кельтских языков. М., 1954, էջ 36:

³ Տե՛ս J. Pokorny, *Indogermanisches etymologisches Wörterbuch*, Bd. I, Bern und München, 1959, էջ 82, Լьюис Г., Педерсен Х., նշվ. աշխ., էջ 27:

⁴ Տե՛ս J. Pokorny, նշվ. աշխ., էջ 1166, Լьюис Г., Педерсен Х., նշվ. աշխ., էջ 31:

բրետ. *beo*, կոռն. *byw*, *bew* «ողջ», վալիս. *bywyd* «կյանք»⁵ և այլն:

Ժողովրդական լատիներենում արդեն մ. թ. I դարում *w* կիսաձայնը (որն ընդունված ավանդական գրությամբ սովորաբար արտահայտվում է *u* կամ *v* գրանշանով) վանկասկզբային դիրքում վերածվել է երկշրթնային շփական *β* (= *ð*)-ի, որն ավելի ուշ ռոմանական տարածքի մեծ մասում դարձել է շրթնատամնային շփական *v*⁶: Նշված հնչյունական զարգացումն ակնհայտ երևում է այն բանից, որ լատիներենից կատարված հնագույն փոխառություններում լատ. *u*(=*w*)-ն տառադարձվել է հին վերին գերմաներեն երկշրթնային *w* կիսաձայնով, մինչդեռ ավելի ուշ շրջանի փոխառություններում՝ հին վերին գերմաներեն շրթնատամնային շփական *v/f*-ով. հմմտ. մի կողմից՝ լատ. *uinum* (= *winum*) > հ. վ. գ. *wīn* «գինի», մյուս կողմից՝ լատ. *uersus* (= *bersus* > *versus*) > հ. վ. գ. *vērs*, *fērs* «ոտանավորի տող, չափածո տող»⁷: Իսկ կելտական լեզուներում լատիական հնագույն փոխառությունների երկշրթնային *u*(=*w*) կիսաձայնը նույնպիսի *u*(*w*) > *g^w/gu* փոփոխության է ենթարկվել, ինչպես նախալեզվից ժառանգված հ.-ե. **u*-ն. հմմտ. լատ. *vīnum* (= *winum*) > հ. իռլ. *fin*, վալիս. *gwin*, հ.կոռն. *guin*, մ. կոռն. *guyn*, բրետ. *gwin* «գինի» և այլն⁸: Մյուս կողմից, լատիներենում *u*(*w*) > *ð* > *v* փոփոխությունից հետո, երբ գերմանական լեզուներից փոխառյալ բառերի շնորհիվ ժողովրդական լատիներենում կրկին ի հայտ է եկել երկշրթնային *w* կիսաձայնը, վերջինս հետագա հնչյունական զարգացմամբ վերածվել է արդեն ոչ թե *v*-ի, այլ *gw*-ի: Այդպես էլ լատ. *-ui* տիպի պերֆեկտի *u*-ն, հետագայում ձայնավորից առաջ վերածվելով *w*-ի, ռոմանական որոշ լեզուներում *w* > *gw* > *g* փոփոխության է ենթարկվել (իսկ *g*-ն, բառավերջում խլանալով, տվել է *k*, գրությամբ՝ *c*)⁹. հմմտ. մի կողմից՝ *wardōn* > (հմմտ. անգլիս. *wardōn* «պահել, պահպանել», ժ. անգլ. (to) *ward* «հսկել, պաշտպանել») > ֆր. *garder*, իտ. *guardare*, իսպ., պորտ. *guarder* «հսկել, պահպանել»¹⁰, *wērra* > (հմմտ. հ. վ. գ. *wērra* «կռիվ, վեճ») > ֆր. *guerre*, իտ., իսպ., պորտ. *guerra* «պատերազմ»¹¹, մյուս կողմից՝ լատ. պերֆ. եզ. I դ. *tenuī* «բռնեցի, պահեցի» > **tenwi* > **tengwi* > **tingw* > հ.

⁵ Տե՛ս **J. Pokorny**, նշվ. աշխ., էջ 468, **Льюис Г., Педерсен Х.**, նշվ. աշխ., էջ 37:

⁶ Տե՛ս **V. Väinänen**, Introduction au latin vulgaire, 3^e éd., Paris, 1981, էջ 50, **M. Weiss**, Outline of the Historical and Comparative Grammar of Latin, Ann Arbor and New York, 2009, էջ 512, **J. N. Adams**, Social Variation and the Latin Language, Cambridge University Press, 2013, էջ 183-190:

⁷ Տե՛ս **Доца А.** История французского языка. М., 1956, էջ 60-61, **W. Braune, I. Reiffenstein**, Althochdeutsche Grammatik. Laut- und Formenlehre, 15. Aufl. bearbeitet von I. Reiffenstein, Tübingen, 2004, էջ 131, ծան. 2:

⁸ Տե՛ս **Льюис Г., Педерсен Х.**, նշվ. աշխ., էջ 88-89:

⁹ Տե՛ս **Доца А.**, նշվ. աշխ., էջ 60-61, **Прокош Э.** Сравнительная грамматика германских языков. М., 1954, էջ 86:

¹⁰ Տե՛ս **F. Kluge**, Etymologisches Wörterbuch der deutschen Sprache, Berlin, 1960, էջ 840-841, **C. T. Onions (editor)**, The Oxford Dictionary of English Etymology, London, 1969, էջ 992, **A. Dauzat, J. Dubois, H. Mitterand**, Dictionnaire de poche de la langue française. Nouveau dictionnaire étymologique et historique, Paris, 1971, էջ 334:

¹¹ Տե՛ս **F. Kluge**, նշվ. աշխ., էջ 865, **C. T. Onions**, նշվ. աշխ., էջ 991, **A. Dauzat, J. Dubois, H. Mitterand**, նշվ. աշխ., էջ 358:

ֆր. *tinc*, պրով. *tenc*, լատ. պերֆ. եզ. I դ. *volui* «ցանկացա, ուզեցա» > **volwi* > **volgwi* > պրով. *volc* և այլն¹²:

Ա. Մեյեն, նկատի ունենալով, որ հին պարսկերենի՝ ավանդաբար *v* գրանշանով տառադարձվող բաղաձայնը (< հ.-ե. **u* կիսաձայնից) ժամանակակից պարսկերենում համապատասխան հնչյունական պայմաններում տվել է մի կողմից՝ *b*, մյուս կողմից՝ *g*, ենթադրում է, որ հին պարսկերենում դեռևս պահպանվելիս է եղել հ.-ե. **u* երկշրթնային կիսաձայնը, այսինքն՝ այն դեռևս վերածված չի եղել շրթնատամնային շփական *v*-ի¹³:

Հայերենի նախագրային շրջանում նույնպես **u* > *g*(*q*) հնչյունական անցում է տեղի ունեցել. հմմտ. հ.-ե. **uoinio-* > հայ. *զինի* և այլն: Ընդ որում՝ հայերենից փոխառյալ վրաց. *gvino* «գինի» և նմանատիպ մի քանի այլ ձևերի հիման վրա ենթադրվում է, որ հ.-ե. **u* > հայ. *q* փոփոխությունը ունեցել է *g^w* միջակա աստիճան՝ **u* > *g^w* > *g*¹⁴: Նկատենք, որ բառակզրում հ.-ե. **u* > հայ. *q* անցումը օրինաչափ բնույթ է կրում, և կարելի է ասել՝ բացառություններ չկան: Այն մի խումբ բառերը, որոնք հ.-ե. **u*-ի դիմաց հայերենում բառակզրում *v* ունեն, հետազոտողները համարում են այլ լեզուներից (մասնավորապես իրանական և իտալուվական) փոխառյալ¹⁵: Մինչդեռ միջձայնավորական դիրքում հայերենում հ.-ե. **u*(*w*)-ի երկակի արտացոլումը (*q* և *v*/*u*) տարակարծությունների տեղիք է տվել: Ընդհանուր առմամբ մեզ հավանական է թվում, որ «միջձայնավորային դիրքում հնդեվրոպական **w*-ի՝ հայերենում շրթնային արտասանության պահպանման համար որոշակի դեր է խաղացել նրան հաջորդող սկզբնական **o* ձայնավորը»¹⁶, եթե նկատի ունենանք, որ տարբեր լեզուներում հարակից շրթնային *o* և *u* ձայնավորների ազդեցությամբ միջձայնավորական *g*-ն (երբեմն նաև այլ բաղաձայններ) հաճախ վերածվում է *w*-ի կամ *v*-ի¹⁷: Իհարկե, հ.-ե. **u* > հայ. *v*/*u* հնչյունական անցումը հավանաբար պայմանավորված է եղել հնչյունաբանական նաև այլ գործոններով¹⁸:

Այսպիսով, տարբեր լեզուներից վերը բերված տվյալները հաստատում են, որ *w* > *g^w* > *g* փոփոխությունը սովորաբար տեղի է ունենում երկշրթնային *w* կիսաձայնի առկայության պարագայում, ուստի կար-

¹² Sté u **Доза А.**, նշվ. աշխ., էջ 61, **Сергиевский М. В.** Введение в романское языкознание. М., 1952, էջ 218-219, **Бурсье Э.** Основы романского языкознания. М., 1952, էջ 142-143, 189-190:

¹³ Sté u **Мейе А.** Введение в сравнительное изучение индоевропейских языков. М.-Л., 1938, էջ 132-133, **A. Meillet**, Grammaire du vieux-perse, Paris, 1931, էջ 84, հմմտ. նաև **R. Kent**, Old Persian, New Haven, 1953, էջ 39:

¹⁴ Sté u **Գ. Բ. Ջառուկյան**, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 346, **Джаукян Г. Б.** Очерки по истории дописьменного периода армянского языка. Ер., 1967, էջ 224:

¹⁵ Sté u **Джаукян Г. Б.**, նշվ. աշխ., էջ 297:

¹⁶ Sté u **Մ. Աղաբեկյան**, Հայերենի համեմատական հնչյունաբանության հարցեր // Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր, պրակ 2, Եր., 1998, էջ 67:

¹⁷ Sté u **Ս. Ավետյան**, նշվ. աշխ., էջ 222:

¹⁸ Հմմտ. **Н. К. Martirosyan**, Etymological Dictionary of the Armenian Inherited Lexicon, Leiden, 2010, էջ 707:

ծում ենք՝ այն կարող է դիտվել իբրև տարածամանակյա-տիպաբանական օրինաչափություն:

Արդ, եթե առաջնորդենք այդ օրինաչափությամբ, ապա իրանական լեզուների պատմական փաստերի հիման վրա կարելի է ենթադրել, որ իր. **u(w)*-ն ոչ միայն հին պարսկերենում, այլև միջին պարսկերենի շրջանում նույնպես (համենայն դեպս, գոնե որոշակի հնչյունական պայմաններում) դեռևս պահպանում էր սկզբնական երկշրթնային կիսաձայնի արտասանությունը (թեև ավանդական տառադարձմամբ այն դարձյալ գրվում է *v*):

Ինչպես վերը նշվեց, հ. պրսկ. *v(w)*-ն ժամանակակից պարսկերենում համապատասխան հնչյունական պայմաններում տվել է *b* և *g*: Նկատենք, որ ժամանակագրորեն $v > b$ փոփոխությունը տեղի է ունեցել նոր պարսկերենում, իսկ $v > g$ փոփոխությունը՝ մասամբ միջին պարսկերենում (իր. **f-* ից առաջ), մասամբ նոր պարսկերենում (իր. **ui* հնչյունակապակցության դեպքում). հմմտ. իր. **yāhyāh* > մ. պրսկ. *vēh* > դաս. պրսկ. *bēh* > ժ. պրսկ. *bēh* «լավ, ավելի լավ», իր. **yūda* > մ. պրսկ., դաս. պրսկ. *gul* > ժ. պրսկ. *gol* «ծաղիկ, վարդ», իր. **ū-naša* > մ. պրսկ. *vināh* > դաս. պրսկ. *gunāh* > ժ. պրսկ. *gonāh* «մեղք, հանցանք» և այլն¹⁹:

Այն, որ մ. պրսկ. *v*-ն նոր պարսկերենում տվել է մի կողմից՝ *b*, մյուս կողմից՝ *g* (այն է՝ $vi > gu$), կարծում ենք, վկայում է միջին պարսկերենում երկշրթնային *w* կիսաձայնի գոյության մասին (համենայն դեպս, գոնե հնչյունական որոշակի պայմաններում): Այլապես վերջինս շրթնատամնային շփական *v* լինելու դեպքում չէր կարող նոր պարսկերենում վերածվել *g*-ի:

Ժամանակակից պարսկերենում միջձայնավորական դիրքում իր. **u(w)*-ից ունենք շրթնատամնային շփական *v*, իսկ հնագույն երկշրթնային *w* արտասանությունը պահպանվում է նույն հարավարևմտյան իրանական լեզուների խմբին պատկանող դարի լեզվում. հմմտ. իր. **yūān* > ժ. պրսկ. *ǰāvān*, դար. *ǰawān* «երիտասարդ» և այլն:

Պարթևերենը, որից սերում է հայերենի իրանական փոխառությունների մեծ մասը, պատկանում է միջին իրանական լեզուների հյուսիսարևմտյան խմբին և ժամանակագրորեն մոտավորապես զուգահեռ է հարավարևմտյան խմբին պատկանող միջին պարսկերենին: Ուստի մնում է պարզել, թե արդյոք հնարավոր է հյուսիսարևմտյան իրանական լեզուների և մասնավորապես պարթևերենի պարագայում ևս երկշրթնային *w* կիսաձայնի առկայություն ենթադրել:

Նշենք, որ հյուսիսարևմտյան խմբին պատկանող ժամանակակից իրանական լեզուների մի մասում բառակազմի դիրքում ունենք շրթնատամնային շփական *v*, իսկ, ասենք, գիլիաներենում և քրդերենում՝ *b*, բելուջերենում՝ *gʷ(gv)* և *g*, օրմուրի լեզվում՝ *ɣʷ*, *ɣ*, իսկ միջձայնավորական

¹⁹ *St* u *Расторгуева В. С.* Сравнительно-историческая грамматика западноиранских языков: Фонология. М., 1990, էջ 100-103:

դիրքում լեզուների մի մասում առկա է *v*, իսկ այլ լեզուներում՝ *w*²⁰:

Արդ, կարծում ենք՝ հյուսիսարևմտյան խմբի ժամանակակից իրանական լեզուներում իր. **u*-ից > *v*, *b*, *g*^w, *γ*^w հնչյունական զարգացումները նույնպես վկայում են ավելի վաղ շրջանում երկշրթնային *u(w)* կիսաձայնի առկայության մասին: Այդ առումով հատկապես կարևոր են բելուջերենի և օրմուրի լեզվի տվյալները՝ իր. **u* > բելուջ. *g*^w, *g*, օրմ. *γ*^w, *γ* հնչյունական անցումներով: Տիպաբանական տեսանկյունից շփական *γ*^w-ը *w* > *g*^w հնչյունական զարգացման միջակա աստիճանն է ներկայացնում, իսկ *γ*-ի և *g*-ի դեպքում անհետացել է համապատասխան շրթնային տարրը: Ի դեպ, բելուջերենում միջձայնավորական դիրքում իր. **u*-ն պահպանվել է որպես երկշրթնային կիսաձայն (= անզլ. *w*). հմմտ. իր. **y*uān > բելուջ. *y(u)wān* «լավ, երիտասարդ», իր. **nauati* > բելուջ. *nawad* «իննսուն» և այլն²¹:

Սակայն մեզ հետաքրքրող հարցի տեսանկյունից առավել կարևոր է այն, որ դեռևս միջին պարսկերենում հյուսիսարևմտյան իրանական լեզուներից փոխառված բառերում իր. **uar* հնչյունակապակցությունը նոր պարսկերենում տվել է *gur* (ժ. պրսկ. *gor*), մինչդեռ բնիկ հարավարևմտյան բառերում նույն իր. **uar* կապակցությունը նոր պարսկերենում դարձել է *bar* (ժ. պրսկ. *bār*). հմմտ. մի կողմից՝ իր. **u*arah > մ. պրսկ. *var* (բնիկ) > դաս. պրսկ. *bar* > ժ. պրսկ. *bār* «կործք», մյուս կողմից՝ իր. **uarāz*a > մ. պրսկ. *varāz* (հյուսիսարևմտյան խմբից փոխառյալ) > դաս. պրսկ. *gurāz*, ժ. պրսկ. *gorāz* «վայրի խոզ» և այլն²²:

Արդ, այն հանգամանքը, որ իր. **uar* հնչյունակապակցության **u*-ն հարավարևմտյան խմբի բնիկ բառերում նոր պարսկերենում տվել է *b*, մինչդեռ հյուսիսարևմտյան խմբից փոխառված բառերում իրանական նույն **uar* հնչյունակապակցության **u*-ն նոր պարսկերենում տվել է *g(gu)*, թույլ է տալիս ենթադրելու, որ նշված բառերի փոխառման ժամանակ միջին պարսկերենում ընդհանուր իրանականից ժառանգված երկշրթնային **u*-ն, որը իր. **r*-ից առաջ արդեն վերածված է եղել *g*-ի (հմմտ. իր. **ur*da > մ. պրսկ. *gul* «ծաղիկ, վարդ»), իսկ իր. **ui* հնչյունակապակցության դեպքում դեռևս պահպանելիս է եղել *w* կիսաձայնային արտասանությունը, բառասկզբում *vā*, *vē* և այլ հնչյունակապակցությունների պարագայում թերևս արդեն *w* կիսաձայնից վերածված է եղել երկշրթնային *ḡ* կամ շրթնատամնային *v* շփականի (եթե նկատի ունենանք, որ վերջինս հետագայում նոր պարսկերենում տվել է *b*, և որ տիպաբանական տեսանկյունից միանգամայն հնարավոր են ինչպես *w* > *ḡ* > *b*, այնպես էլ *w* > *v* > *b* հնչյունական զարգացումները): Մյուս կողմից, միջին պարսկերենի շրջանում հյուսիսարևմտյան խմբից փոխառ-

²⁰ St' u **Расторгуева В. С.**, նշվ. աշխ., էջ 165-169:

²¹ Բերված օրինակների համար տե՛ս **Расторгуева В. С.**, նշվ. աշխ., էջ 168, «Основы иранского языкознания: Новоиранские языки: северно-западная группа». Т. I. М., 1991, էջ 36:

²² St' u **Расторгуева В. С.**, նշվ. աշխ., էջ 103, 101:

յալ *u*-ի՝ նոր պարսկերենում *g*-ի վերածվելը (հմմտ. **u*arāz > *gur*āz «վայրի խոզ») թույլ է տալիս ենթադրելու, որ տվյալ ժամանակահատվածում, ի տարբերություն միջին պարսկերենի, հյուսիսարևմտյան խմբում, այդ թվում՝ պարթևերենում, իր. **u*(*w*)-ի կիսաձայնային արտասանությունը պահպանվելիս է եղել ոչ միայն *ui*, այլև *uā*, *uē* և այլ հնչյունակապակցությունների պարագայում, այսինքն՝ հյուսիսարևմտյան խմբում բառասկզբում (ըստ այդմ՝ առավել ևս բառամիջում ու բառավերջում) իր. **u*-ն դեռևս արտասանական ուժգնացման ենթարկված չի եղել և հանդես է եկել որպես երկշրթնային *u*(*w*) կիսաձայն: Այլապես հնչյունական նույն արժեքն ունենալու դեպքում հյուսիսարևմտյան խմբից փոխառյալ մ. պրսկ. *var*āz «վայրի խոզ» և բնիկ մ. պրսկ. *var* «կուրծք» բառերի *v*-ն հնչյունական նույն պայմաններում (այն է՝ բառասկզբում՝ *a*-ից առաջ) չէր կարող նոր պարսկերենում տարբեր կերպ արտացոլվել՝ մ. պրսկ. *var*āz > դաս. պրսկ. *gur*āz > ժ. պրսկ. *gor*āz և մ. պրսկ. *var* > դաս. պրսկ. *bar* > ժ. պրսկ. *b*ār:

Այն, որ իր. **uar* հնչյունակապակցության **u*-ն հարավարևմտյան խմբի բնիկ բառերում բառասկզբում ենթարկվել է *u* > (> *ū/v*) > *b* հնչյունական զարգացման, իսկ արդեն *u* > *ū/v* փոփոխությունից հետո միջին պարսկերենում նորից ի հայտ եկած *u*-ն (< հյուսիսարևմտյան խմբից փոխառյալ) հնչյունական նույն պայմաններում հետագայում այլ զարգացում է ունեցել՝ *u* > *g* (այն է՝ **uar* > *gur*), բնավ էլ զարմանալի չէ, քանի որ տարածամանակյա տիպաբանության տեսանկյունից թե՛ շրթնատամնային *v*-ն, թե՛ երկշրթնային *b/b̄*-ն, թե՛ հետնալեզվային *g^w/g^v/γ^w/γ^v*-ն կարող են լինել երկշրթնային *u*(*w*) կիսաձայնի արտասանական ուժգնացման հնարավոր դրսևորումները: Ուստի հաճախ մինևնույն լեզվում հնչյունական տարբեր պայմաններում (հմմտ. բնիկ մ. պրսկ. *va* > դաս. պրսկ. *ba* և բնիկ մ. պրսկ. *vi* > դաս. պրսկ. *gu* հնչյունական անցումները) կամ հնչյունական նույն պայմաններում ժամանակային տարբեր փուլերում երկշրթնային *u*(*w*)-ից կարող է զարգանալ մերթ՝ *v*, մերթ (*b̄*) > *b*, մերթ էլ (*γ^w* > *g^w*) > *g*: Ի դեպ, արդեն վերը տեսանք, որ լատիներենում հ.-ե. **u*(*w*)-ն բառասկզբային դիրքում հետագայում վերածվել է շրթնատամնային *v*-ի, որից հետո գերմանական լեզուներից փոխառյալ նույն երկշրթնային *w* կիսաձայնը (դարձյալ հ.-ե. **u*-ից) լատիներենում ենթարկվել է արդեն ոչ թե *w* > *ū* > *v*, այլ *u*(*w*) > *g^w* > *g* հետագա զարգացման:

Այսպիսով, վերը կատարված քննության հիման վրա մենք հակված ենք կարծելու, որ հայերենի իրանական փոխառությունների (համենայն դեպս, գոնե պարթևական շրջանում և ավելի վաղ հայերենին անցած) ավանդական *v*-ն նույնպես փոխառման ժամանակ դեռևս երկշրթնային *w* կիսաձայնի արտասանություն է ունեցել, ընդ որում՝ ոչ միայն բառամիջում և բառավերջում, այլև բառասկզբային դիրքում: Ուստի իր. *var*āz(*a*) > (հմմտ. մ. պրսկ. *var*āz, դաս. պրսկ. *gur*āz «վայրի խոզ») > հ. հայ. *վարազ*, իր. *vinas* > (հմմտ. մ. պրսկ. *vin*ās, դաս. պրսկ. *gun*āh «մեղք, հան-

ցանք») > h. հայ. *վնաս*, իր. *vičār* > (հմմտ. մ. պրսկ. *vičār* «վճիռ», դաս. պրսկ. *guzār* «վճար, հատուցում») > h. հայ. *վճար*, իր. *vat* > (հմմտ. մ. պրսկ. *vat*, դաս. պրսկ. *bad*) > h. հայ. *վատ*, իր. *dēvan* > (հմմտ. մ. պրսկ. *dēvān* «արխիվ», դաս. պրսկ. *divān* «ատյան, դիվան») > h. հայ. *դիւան* «դահլիճ, ատյան, դպրոց», իր. *armāv* > (հմմտ. մ. պրսկ. *armāv*, դաս. պրսկ. *xurmā*) > h. հայ. *արմաւ*, իր. *patwēd* > (հմմտ. մ. պրսկ. (մնք.) *ptvyd* «ծանուցում») > h. հայ. *պատուէր*, իր. *nivāg* > (հմմտ. մ. պրսկ. *nivāk*, *nwag*(*ni-vāg*), դաս. պրսկ. *navā*) > h. հայ. *նուագ*, իր. *nivēd* > (հմմտ. մ. պրսկ. *nivēdēm* «ձնում եմ, նվիրում եմ») > h. հայ. *նուէր*²³ և նման այլ ձևերի համար, վերը ասվածին համապատասխան, կարելի է ենթադրել երկշրթնային *w*-ով իրանական ձևեր՝ *warāz*, *winas*, *wičār*, *wat*, *dēwan*, *armāw*, *patwēd*, *niwāg*, *niwēd* և այլն: Եվ եթե հաշվի առնենք հին հայերենում *վ/ւ/ու* գրանշանների հնչյունական արժեքը²⁴, ապա կարող ենք ասել, որ իր. *w*-ն հայերենում փոփոխության է ենթարկվել հետևյալ կերպ.

1) բաղաձայնի և ձայնավորի միջև (որտեղ *w*-ն հաճախ հայտնվել է երկրորդաբար՝ շեշտանախորդ *h* ձայնավորի սղման հետևանքով) տեղի է ունեցել *w* > *u*(*ու*) անցում, ինչպես բնիկ հայերեն բառերի դեպքում, դրանով իսկ՝ *u*(*ու*)-ն հաջորդող ձայնավորի հետ կազմել է երկվանկ ձայնավորային կապակցություն (օր. իր. *patwēd* > h. հայ. *պատուէր*, իր. *niwāg* > h. հայ. *նուագ*),

2) բառակզբում արտասանական ուժգնացման է ենթարկվել՝ վերածվելով երկշրթնային կամ շրթնատամնային շփականի՝ *w* > *ḡ/v*(*վ*) (օր. իր. *winas* > h. հայ. *վնաս*, իր. *wat* > h. հայ. *վատ*),

3) միջձայնավորական դիրքում և բառավերջում՝ ձայնավորից հետո, նախապես պահպանվել է երկշրթնային արտասանությունը, իսկ ավելի ուշ (համենայն դեպս, հայոց գրերի ստեղծումից հետո), այստեղ ևս *w*(*լ*) > *ḡ/v*(*վ*) հնչյունական անցում է տեղի ունեցել, որն ընդգրկել է նաև բնիկ հայերեն բառերի՝ նախալեզվից ժառանգված կամ երկրորդաբար **p*, **bh*-ից առաջացած *w*(*լ*)-ն²⁵ (օր. իր. *dēwan* > h. հայ. *դիւան*, իր. *armāw* > h. հայ. *արմաւ*):

²³ Բերված հայերեն ձևերի իրանական նախաձևերի համար տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 517-547:

²⁴ Հին հայերենում հնարավոր բոլոր դիրքերում *վ/ւ/ու* գրանշանների հնչյունական արժեքի վերաբերյալ հանգամանորեն տե՛ս Ս. Ավետյան, նշվ. աշխ.:

²⁵ Սկզբունքորեն միանգամայն հավանական է, որ *w* > *v/ḡ* արտասանական ուժգնացումը հայերենում բառակզբում կարող էր համեմատաբար ավելի վաղ տեղի ունենալ, քան բառամիջում և բառավերջում, եթե նկատի ունենանք, որ բառակիզբը բառամիջի և բառավերջի համեմատությամբ հնչյունական-արտասանական տեսանկյունից ավելի ուժեղ դիրք է: Այդ առումով ուշագրավ են, օրինակ, հին հնդկերենի ընձեռած տվյալները: Տ. Ելիգարենկովան վեդայական լեզվի *y* և *v* հնչյունների մասին գրում է. «*y*-ի և *v*-ի բաղաձայնականության աստիճանը (степень консонантности), ինչպես նշվում է ուշ շրջանի տրակտատներում, կախված է բառի մեջ նրանց գրաված դիրքից: Նրանք առավել բաղաձայնական բնույթ ունեն բառակզբում, բառամիջում միջին կարգի են, իսկ բառավերջում՝ թեթև» (այն է թույլ – Ս. Ա.) (տե՛ս **Елизаренкова Т. Я.** Грамматика ведийского языка. М., 1982, էջ 69): Ընդ որում՝ բառակզբի *v*-ի ուժգին արտասանությունը հետագայում հնդկական լեզուներում հանգեցնում է նշված դիրքում *v* > *b* հնչյունափոխության (տե՛ս նույն տեղը): Եվ վերջապես, նկատենք, որ հին հնդկերենի շփական *v*-ին բնորոշ շրթնատամնային արտասանությունը, որը ժամանակին նշել են

Բանալի բառեր – իրանական փոխառությունների *v* հնչյունը, կիսաձայնային արտասանություն, *w* կիսաձայնի առկայությունը, տարածամանակյա սլշյալներ

SARGIS AVETYAN – *Possible Semivowel Pronunciation (=W) of Iranian V at the Period of It Being Borrowed by Old Armenian.* – В статье высказывается предположение, что фонема *v*, заимствованная древнеармянским языком, первоначально, то есть в среднеиранский период, сохраняла полугласный характер. Оно основывается на диахроническо-типологическом наблюдении, согласно которому фонетическое развитие $\check{e}(w) > (gw) > g$ обычно предполагает наличие лабиовелярного полугласного *w*, и на анализе соответствующих диахронических данных иранских языков.

Ключевые слова: *фонема v, лабиовелярный полугласный, диахронические данные*

SARGIS AVETYAN – *The Possible Semivowel Pronunciation (=W) of Iranian V at the Period of It Being Borrowed by Old Armenian.* – An assumption is made that the phoneme *v* of Iranian loanwords into Armenian, in all likelihood, still preserved its original semivowel character (=w) at the period of it being borrowed by Old Armenian, that is, in the Middle Iranian period. This assumption is based on a diachronic-typological observation, according to which the phonetic development $\check{E}(w) > (gw) > g$ usually implies the existence of the labiovelar semivowel *w*, and an analysis of the corresponding diachronic evidence from Iranian languages.

Key Words: *the phoneme v of Iranian loanwords, the existence of the labiovelar semivowel, diachronic evidence*

հնդիկ քերականները (տե՛ս **Мейе А.**, նշվ. աշխ., էջ 132), ակնհայտ կերպով դրսևորվել է հատկապես բառակազմի դիրքում (տե՛ս **Елизаренкова Т. Я.**, նշվ. աշխ., էջ 69, նույնի «Исследования по диахронической фонологии индоарийских языков». М., 1974, էջ 23):